

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ուկրաինայի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

համոզված լինելով, որ գիտատեխնիկական համագործակցությունը հանդիսանում է երկկողմ հարաբերությունների ողջ համալիրի կարևոր բաղկացուցիչ մաս և ընդունելով գիտության և տեխնոլոգիաների ոլորտում կոոպերացիայի անհրաժեշտությունը,

հաշվի առնելով պատմականորեն ձևավորված գիտատեխնիկական կապերի և գիտության ու տեխնիկայի զարգացման գործում գերակայությունների ընդհանրությունը,

ընդունելով, որ այդպիսի համագործակցությունը կնպաստի երկու երկրների և ժողովուրդների միջև երկկողմ փոխշահավետ առևտրատնտեսական կապերի ամրապնդմանը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց երկրների ազգային օրենսդրություններին համապատասխան, կնպաստեն այդ երկրների միջև գիտատեխնիկական համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

Հոդված 2

Երկկողմ գիտատեխնիկական համագործակցության ուղղությունները կորոշվեն՝ ելնելով երկու երկրներում գիտության և տեխնիկայի զարգացման երկարաժամկետ շահերից:

Հոդված 3

Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը կիրականացվի երկու պետությունների նախարարությունների, գերատեսչությունների, գիտությունների ակադեմիաների, գիտահետազոտական հիմնարկների ու կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, առանձին գիտնականների և մասնագետների միջոցով՝ նրանց իրավասության սահմաններում ազգային

օրենսդրություններին համապատասխան, նրանց միջև ուղիղ համաձայնագրերի, դաշնագրերի և պայմանագրերի հիման վրա: Համագործակցության ընդհանուր ղեկավարումը և համակարգումը կիրականացվի Ուկրաինայի գիտության և տեխնոլոգիաների գծով նախարարության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից: Ուղիղ համաձայնագրերը, դաշնագրերը և պայմանագրերը պետք է սահմանեն համագործակցության իրականացման տնտեսական և կազմակերպական պայմանները, հատկապես՝

համագործակցության նպատակները և բովանդակությունը, ակնկալվող արդյունքները, նախագծերի իրականացման ժամկետները և պայմանները,

աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները, ֆինանսական փոխադարձ պարտավորությունները,

գիտական օբյեկտների, համատեղ հետազոտությունների և ստացված մտավոր սեփականության իրավունքների բաշխման և այդ իրավունքների պահպանության և օգտագործման, համագործակցության ընթացքում ստացված արդյունքների համատեղ օգտագործման կարգը,

վիճելի հարցերի լուծման և համագործակցության շրջանակներում պատճառված վնասների հատուցման կարգը,

համագործակցությանը երրորդ պետությունների կազմակերպությունների և անձանց կամ միջազգային կազմակերպությունների մասնակցության, այդպիսի մասնակցության ֆինանսավորման ապահովման և համագործակցության արդյունքների օգտագործման կարգը,

համագործակցության ընթացքում միմյանց փոխանցվող տեղեկության հավաստիության, նյութերի և սարքավորումների որակի նկատմամբ պատասխանատվությունը:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

համատեղ գիտական և գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի իրականացում, դրանց փորձաքննության փոխադարձ անցկացում,

գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համատեղ հրապարակում,

գիտահետազոտական համատեղ կոլեկտիվների ձևավորում, ներառյալ դաշտային համատեղ հետազոտությունների, նորարարական և այլ տիպի կազմակերպությունների համար, որոնք ապահովում են նոր տեխնոլոգիաների իրացում,

գիտական և գիտատեխնիկական տեղեկության, փաստաթղթերի, գրականության և մատենագիտական հրատարակությունների փոխանակություն,

գիտնականների և մասնագետների փոխանակություն, համատեղ սեմինարների, գիտական կոնֆերանսների, աշխատանքային հանդիպումների և ստաժավորումների կազմակերպման միջոցով գիտնականների և մասնագետների որակավորման բարձրացում:

Համագործակցությունը կարող է իրականացվել նաև փոխհամաձայնեցված այլ ձևերով, որոնք կապահովեն սույն Համաձայնագրի իրագործումը:

Համագործակցության ձևերը ընտրելիս ու սահմանելիս Կողմերը ղեկավարվում են գիտության զարգացման և երկու երկրների ու ժողովուրդների տնտեսական և հասարակական առաջընթացի շահերով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը ստեղծում են գիտատեխնիկական համագործակցության հարցերի համատեղ հանձնաժողով:

Իր գործունեությունը կազմակերպելու համար հանձնաժողովը մշակում և հաստատում է աշխատանքային կանոնակարգ:

Հոդված 6

Հաշվի առնելով գիտական հետազոտությունների և փորձարարական ստորուկտորական մշակումների՝ համաշխարհային մակարդակի պահպանման կարևորությունը, Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն երկու երկրների գիտնականների մատչելիության ապահովմանը նորագույն փորձարարական սարքավորումներին, ինչպես նաև կոոպերացիայի հիմունքներով կմասնակցեն դրա մշակման, արտադրության և ձեռք բերման աշխատանքներին:

Հոդված 7

Կողմերը պայմանավորվեցին, որ համագործակցության ընթացքում ստացված գիտական և գիտատեխնիկական տեղեկատվությունը, ազգային գործող օրենսդրությանը համապատասխան, բաց է հրապարակման համար և, դրա տարածման ընդունված եղանակների օգտագործման շրջանակներում, մատչելի կլինի համաշխարհային գիտական հասարակությանը:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի շրջանակներում, համատեղ նախագծերում մասնակցություն ցուցաբերած փորձագետների, գիտնականների և այլ մասնագետների փոխանակությունը կատարվում է նախօրոք պայմանավորվածության համաձայն, իսկ ծախսերի վճարումները՝ հետևյալ կերպ՝

գործուղող Կողմը վճարում է Համաձայնագրի մասնակից պետության նախանշված կետերի միջև գործուղվող մասնագետի տեղափոխության ծախսերը,

ընդունող Կողմն ամբողջությամբ իր վրա է վերցնում գործուղված մասնագետի կեցության, սննդի, տեղափոխության և այլ ծախսերը իր պետության տարածքում՝ ելնելով ծախսերի չափակարգերից, որոնք սահմանված են ընդունող Կողմի համապատասխան կարգի մասնագետների համար,

ընդունող Կողմի պետության տարածքում գործուղված մասնագետի բժշկական սպասարկման հարցերը /սուր հիվանդությունների կամ դժբախտ պատահարների դեպքում/ լուծվում են ընդունող Կողմի հաշվին՝ նույն պայմաններով, ինչպիսիք գործում են ընդունող Կողմի աշխատակիցների համար:

Տվյալ կարգը գործում է, եթե համագործակցող կազմակերպությունների փոխադարձ պայմանավորվածությամբ որևէ այլ կարգ չի սահմանվել:

Հոդված 9

Կողմերը, հաշվի առնելով ազգային օրենսդրությունը, ապահովում են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, որը կարող է ստեղծվել սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության արդյունքում:

Մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների պահպանության և օգտագործման հարցերը կարգավորվում են ուղիղ համաձայնագրերով, դաշնագրերով և պայմանագրերով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի իրավունքները և պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից:

Սույն Համաձայնագրի դրույթներն իրականացվում են Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան և չեն մեկնաբանվում որպես Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունների մեջ փոփոխություններ կատարելու պահանջ:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կարող են սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ մտցնել, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում, ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրով նախատեսված կարգով:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական գործընթացներն ավարտվելու մասին միմյանց իրազեկ դարձնելու պահից և գործում է հինգ տարի ժամկետով: Համաձայնագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածի համար, եթե Կողմերից ոչ մեկը, Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ, մյուս Կողմին գրավոր չի տեղեկացնում Համաձայնագիրը չեղյալ հայտարարելու իր ցանկության մասին:

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում:

Սույն Համաձայնագրի ոչ մի փոփոխություն կամ գործողության դադարեցում չի կարող փոփոխել ստանձնած իրավունքները և պարտավորությունները, որոնք ծագել են սույն Համաձայնագրի շրջանակներում մինչև նման փոփոխությունների ուժի մեջ մտնելը կամ Համաձայնագրի գործողության ավարտը:

Կատարված է Կիև քաղաքում 1997 թվականի հուլիսի 22-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 2-ից: